

## «Մանկավարժական միտք» Երևան, 2014թ.

1-2, էջ 86-91

### ԵՐԵՒԱՅԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՕՆՏՈԳԵՆԵԶԻ ԵՎ ԴԻԶՕՆՏՈԳԵՆԵԶԻ ՏԵՄԱՆԿՑՈՒՆԻՑ

Օնտոգենեզում երեխայի խոսքի ձևավորումը և զարգացումը մշտապես եղել է բազմաթիվ հեղինակների ուշադրության կենտրոնում (A. H. Гвоздев 1961; B. И. Логинова 1984; Т. Н. Ушакова, 2004 и др.):

Ինչպես արդարացիորեն նշում են Ռ. Բ. Լալանան և Ն. Վ. Սերեբրյակովան՝ (1999) երեխայի բառապաշարի զարգացումը պայմանավորված է մի կողմից մտածողության և մյուս հոգեկան գործընթացների զարգացմամբ, մյուս կողմից՝ խոսքի մյուս բաղադրիչների՝ հնչյունահնչության և քերականական, զարգացմամբ:

Վերլուծելով օնտոգենեզում բառապաշարի զարգացումը՝ հեղինակները նշում են, որ առաջին իմաստավորված բառերը երեխայի խոսքում հայտնվում են սովորաբար կյանքի առաջին տարվա վերջում: Սակայն դրանց քանակը քիչ է, և բացի այդ, երեխան հազվադեպ է դրանք գործածում իր նախաձեռնությամբ: Տ. Ն. Ուշակովան (2004) նշում է, որ առաջին մանկական բառերն իրենց ակուստիկական ձևով սովորաբար մոտ են թոթովանքային դրսևորումներին (մա-մա, պա-պա, բո-բո) և ստացել են «դայակային բառեր» անվանումը: Առաջին բառերը թոթովանքից սկզբունքորեն տարբերվում են շրջապատողների կողմից նկատվող իրենց «իմաստավորվածությամբ»: Առաջին մանկական բառերը սովորաբար չեն անվանում կոնկրետ առարկաներ և երևույթներ՝ երեխան մի բառով անվանում է ամբողջական իրադրություն, ընդ որում միևնույն բառը կարող է վերաբերել շատ իրադրությունների:

Ա. Ռ. Լուրիան (1979), անդրադառնալով երեխայի առաջին բառերին, ընդգծում է, որ դրանք չեն արտահայտում նրա վիճակը, այլ ուղղված են առարկային և նշում են առարկան: Սակայն այս բառերն սկզբում կրում են սիմպրակտիկ բնույթ, սերտորեն ներհյուսված են պրակտիկայի մեջ:

Բառի նշանակությունը երեխայի ճանաչողական գործունեության զարգացման ընթացքում կատարելագործվում է: Մտածողության առարկայագործնական և առարկայապատկերային բնույթի շնորհիվ երեխան ամենից առաջ տիրապետում է

զննականորեն ներկայացված կամ իր գործունեության համար մատչելի առարկաների, երևույթների, որակների, հարաբերությունների անվանումներին:

Վ. Ի. Լոգինովան (1984), ևս ընդգծել է մտածողության զարգացման փոխկապակցվածությունը բառի նշանակության զարգացման հետ՝ նելով, որ միայն աստիճանաբար, մտածողության զարգացմանը զուգահեռ նախադպրոցականները տիրապետում են բառի օբյեկտիվ, հասկացական բովանդակությանը: Հեղինակը նշում է նաև, որ բառի նշանակությունը երեխաների ճանաչողական հնարավորությունների զարգացմանը զուգահեռ փոփոխվում է ողջ նախադպրոցական տարիքում: Բառապաշարի ակտիվացման և կատարելագործման հնարավորությունը սերտորեն կապված է բառի նշանակության ընկալման հետ, որի հիման վրա տեղի է ունենում բառերի որոնումը, դրանց ընտրությունը, խոսքում իմաստով միավորված այլ բառերի զուգակցությամբ դրանց կիրառման ակտիվությունը:

Օ. Վ. Տրոշինը և Ե. Վ. Ժուլինան (2005), օնտոգենեզում երեխայի առաջին բառերի բնույթը որոշելու նպատակով վերլուծել են դրանց հիմքում ընկած ընդհանրացումները:

Հեղինակները նշում են, որ ընդհանրացումների առաջին տեսակը կազմում են զննական ընդհանրացումները, որոնք պայմանավորված են առարկաների խիստ անհատական-էական հատկանիշներով: Այս տիպի առաջին բառերն ունեն վառ հուզական երանգավորում, դիտարկվում են տարբեր անվանումներ միևնույն առարկայի համար տարբեր իրադրություններում և միևնույն ժամանակ բառի բազմիմաստություն: Այս առանձնահատկությունները բացատրվում են առաջին բառերի իրադրությունային լինելով՝ բառերը վերաբերում են ողջ իրադրությանը և նշում են ոչ միայն առարկան, այլ նաև դրա հետ կապված իրադրությունը:

Առաջին բառերի հիմքում ընկած ընդհանրացումների երկրորդ տեսակը տվյալ եզակի առարկայի պատկերացումն է՝ հիմնված նրա ընդհանուր և տարբերակիչ անհատական-ընդհանրացված հատկանիշների առանձնացման հիման վրա: Այս շրջանին բնորոշ է բառապաշարի աճը: Բառն օգտագործվում է անվանողական ֆունկցիայով՝ անվանելով առարկան՝ սովորաբար անվանումը զուգակցելով մատնանշող ժեստով: Այդ պատճառով այս շրջանին բնորոշ չեն առարկայի անվանումը դրա բացակայության կամ դրա արտաքին տեսքի տարբեր փոփոխությունների դեպքում՝ լուսանկարներում, գրքերի նկարներում և այլն:

Ընդհանրացումների երրորդ տեսակն առարկայի ընդհանրացումն է ըստ էական հատկանիշի: Այսպիսի ընդհանրացումները համարվում են «առաջնային հասկացություն»: Այս ընդհանրացումների դեպքում բառն օգտագործվում է առարկայի բացակայության պայմաններում: Առարկան միևնույն բառով անվանվում է դրա տարբեր փոփոխումների դեպքում, սկսվում են օգտագործվել երկու բառից կազմված նախադասություններ:

Մոտավորապես կյանքի երկրորդ տարվա կեսերին երեխայի խոսքում առաջանում են առաջին նախադասությունները: Այս նախադասությունների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ դրանցում բառերն օգտագործվում են անփոփոխ ձևով: Սակայն նույնիսկ քերականական առումով այսպիսի անլիարժեք խոսքը նշանակալիորեն ընդլայնում է մեծահասակի ու երեխայի խոսքային հաղորդակցման հնարավորությունները՝ երեխան հասկանում է խոսքը և կարողանում է դիմել մեծահասակին, արտահայտել իր մտքերը, ցանկությունները, խնդրանքները, կարողանում է նախադասության մեջ նոր յուրացված բառերն օգտագործել նախկինում յուրացրած բառերի հետ:

Տ. Բ. Ֆիլիչևան (2008), ևս, վերլուծելով օնտոգենեզում երեխաների բառապաշարի ձևավորման և զարգացման օրինաչափությունները, նշում է, որ խոսքի նորմալ զարգացման և դաստիարակության բարենպաստ պայմանների դեպքում երեխայի ակտիվ բառապաշարը շատ արագ հարստանում է՝ 3-4 տարեկան երեխաների մոտ տեղի է ունենում պասիվ և ակտիվ բառապաշարի անընդհատ աճ՝ ներառելով գոյականներ, բայեր, ածականներ, մակբայներ, թվականներ, կապեր:

Երեխայի խոսքի զարգացումը մշտապես գրավել է մի շարք հեղինակների ուշադրությունը նաև դիֆօնտոգենեզի տեսանկյունից: Մասնավորապես մի շարք հեղինակների աշխատանքներում նկարագրվում են բառապաշարի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները խոսքի ընդհանուր թերզարգացման դեպքում (Ք. Ի. Լալաևա, Ն. Վ. Սերեբրյակովա, (1999), Շ. Ն. Կոնովալովա, (2004), Ի. Յու. Կոնդրատենկո (2005), Թ. Բ. Ֆիլիչևա, Գ. Վ. Չիրկինա (2008), և օր):

Խոսքի ընդհանուր թերզարգացումով երեխաների բառապաշարը հետազոտող հեղինակները նշում են, որ այս երեխաների մոտ առաջին բառերն ի հայտ են գալիս բավական ուշ: Այսպես, բնութագրելով խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաներին՝ Տ. Բ. Ֆիլիչևան (1985; 1988), Ն. Ս. Ժուկովան, Ե. Մ. Մաստյուկովան

(1990), Ռ. Ի. Լալանան, Ն. Ի Սերեբրյակովան (1990), և այլոք նշում են, որ այս երեխաների առաջին բառերը ձևավորվում են հաճախ 3-4, իսկա ավելի հազվադեպ՝ 5-6 տարեկանում: Բնութագրելով խոսքի ընդհանուր թերզարգացումով երեխաների խոսքի ձևավորման և զարգացման հետագա ընթացքը՝ հեղինակները նշում են, որ այն ընթանում է խաթարված մձևով՝ նրանց բառապաշարն աղքատիկ է, բնութագրվում է բառերի նպատակային կիրառման դժվարություններով, երեխաների առաջին նախադասություններն առաջանում են բավական ուշ, իսկ հետագայում՝ խոսքի զարգացման ընթացքը ևս բնորոշվում է խոսքի քերականական կողմի, բառի հնչյունավանկային կառույցի, բառի իմաստային օգտագործման առանձնահատկություններով:

Այս առումով մեզ հետաքրքրում էր խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների առաջին բառերի ձևավորման բնույթը: Խոսքի ընդհանուր թերզարգացումով երեխաների բառապաշարի ձևավորման և զարգացման օրինաչափություններին վերաբերող հեղինակների (Ղ. Փ. Սպիրովա, 1980, Кондратенко И. Ю. 2005, Филичева Т. Б., Чиркина Г. В, 2008 и др.), Հետազոտությունների վերլուծությունը փաստեց, որ Օ. Վ. Տրոշինի և Ե. Վ. Ժուլինայի (2005), կողմից առանձնացված բառերի հիմքում ընկած ընդհանրացումների երկրորդ և երրորդ տեսակներն այս երեխաների մոտ չեն ձևավորվում:

Տ. Բ. Ֆիլիչևան, վերլուծելով օնտոգենեզում երեխաների բառապաշարի ձևավորման և հարստացման օրինաչափությունները, ըմբռնում է նաև, որ բառապաշարի քանակական և որակական զարգացմանը զուգահեռ երեխաների մոտ աստիճանաբար ձևավորվում է նաև բառաձևավորման հմտությունը: Այսպես, 5-6 տարեկան երեխաներն արդեն հեշտությամբ կատարում են արդեն բառաձևավորման վարժություններ: Նրանք կարողանում են մեկ արմատից ձևավորել տարբեր խոսքի մասեր՝ գոյականներ, բայեր, ածականներ ևն այլն:

Հետազոտության շրջանակներում մեզ համար հետաքրքիր էր նաև, թե խոսքի ընդհանուր թերզարգացումով երեխաների մոտ ինչպես են ձևավորվում բառակազմական կարողությունները: Տ. Վ. Տումանովայի (2002), Տ. Բ. Ֆիլիչևայի (2008), և այլոց հետազոտությունները փաստում են, որ խոսքի ընդհանուր թերզարգացումով երեխաների մոտ ինչպես նախադարձական, այնպես էլ դարձական տարիքում ակնհայտորեն դրսևորվում են բառաձևավորման

դժվարություններ, ինչը չի դիտարկվում խոսքի նորմալ զարգացումով երեխաների մոտ:

Մեր հետազոտության շրջանակներում հատկապես արժևորվում է Ե. Մ. Ստրունինայի (1990) այն միտքը, որ ավագ նախադպրոցական տարիքում «պետք է հիմնականում ավարտվի բառապաշարի միջուկի ձևավորումը՝ պետք է ձևավորվեն որոշ կարևոր իմաստային կոորդինատներ, որոնք բնորոշում են տվյալ լեզվի իմաստային տարածքը: Այդ միջուկը հետագա զարգացման ընթացքում էականորեն չի փոփոխվում: Չնայած բառապաշարի քանակական կուտակումը, հատկապես ուսուցման տարիներին, ընթանում է բավական ինտենսիվորեն, սակայն իմաստային հարաբերությունների «կմախքը» հիմնականում չի փոփոխվում»: Այս դրույթն էլ ավելի է ընդգծում նախադպրոցական տարիքում բառապաշարի զարգացման կարևորությունը:

Մինչդեռ խոսքի ընդհանուր թերզարգացումով երեխաների բառապաշարին վերաբերող հետազոտությունները փաստում են, որ այս երեխաների մոտ հստակ և ստույգ չեն ձևավորվում այն իմաստային կոորդինատները, որոնք անհրաժեշտ են բառի իմաստի հստակեցման համար:

Ե. Մ. Ստրունինան(1990), նշում է նաև, որ նախադպրոցական տարիքում բառապաշարի հարստացումը, նոր բառերի յուրացումը տեղի է ունենում գործնական պլանում: Բայց արդյունավետ դպրոցական ուսուցման համար անհրաժեշտ է, որպեսզի երեխան ժամանակին անցնի խոսքային գործունեության տեսական պլանին, որպեսզի մայրենի լեզվի համակարգը, դրա տարրերը հանդիսանան նրա գիտակցական գործունեության օբյեկտը: Լեզվական երևույթների գիտակցումն ապահովվում է խոսքային կարողությունների և հմտությունների տեղափոխումը կամաձին պլան, որի շնորհիվ պայմաններ են ստեղծվում խոսքային հաղորդակցման և լեզվի հետագա տիրապետման, խոսքի զարգացման համար:

Այսպիսով, պետք է նշել, որ բառապաշարի զարգացումը դիտարկվում է որպես պատմության ընթացքում ժողովրդի կողմից կուտակած բառապաշարի տիրապետման երկարատև գործընթաց: Բառապաշարի ակտիվացման և կատարելագործման հնաշավորությունը սերտորեն կապված է բառի նշանակության զարգացման հետ, որի հիման վրա տեղի է ունենում բառերի որոնումը, դրանց ընտրությունը, խոսքում իմաստով միավորված այլ բառերի զուգակցությամբ դրանց

կիրառումը: Սակայն բառապաշարի ձևավորումը և զարգացումը դիտարկելով դիֆոնոտոգենեզի տեսանկյունից, մասնավորապես, խոսքի ընդհանուր թերզարգացման համատեքստում, պետք է նշել, որ այս երեխաների բառապաշարի ձևավորումն ու զարգացումն ի սկզբանե ընթանում է խաթարված ուղիով:

### **Գրականություն**

1. Гвоздев А.Н., Вопросы изучения детской речи. М. АПН РСФСР, 1961
2. Жукова Н. С, Мастюкова Е. М, Филичева Т.Б., Преодоление ОНР у дошкольников М. 1990
3. Кондратенко И. Ю., Формирование эмоциональной лексики у дошкольников с нарушениями речи // Выявление и преодоление речевых нарушений в дошкольном возрасте / сост И. Ю. Кондратенко, М. 2005
4. Коновалова С. Н., К вопросу о формировании педикативной лексики у старших дошкольников с общим недоразвитием речи / Дефектология 2004 №5, с. 50-55.
5. Лалаева Р. И., Серебрякова Н. В., Коррекция общего недоразвития речи у дошкольников (формирование лексики и грамматического строя) М, 1999, с. 160
6. Логинова В. И., Формирование словаря // Развитие речи детей дошкольного возраста / под ред. Ф. А. Сохина, М., 1984, с. 91-116
7. Лурия А. Р., Язык и сознание, М., 1979, с. 320.
8. Основы теории и практики логопедии / под ред. Р. Е. Левиной, М., 1961, с. 366.
9. Спирова Л. Ф., Особенности речевого развития учащихся с тяжелыми нарушениями речи, М., Педагогика, 1980, с. 192
10. Струнина Е. М., Лексическое развитие дошкольника // Развитие речи дошкольника / под ред. О. С. Ушаковой, М. 1990,
11. Трошин О. В., Жулина Е. В, Логопсихология , М, 2005, с. 256
12. Туманова Т. В., К проблеме развития процессов словообразования у младших школьников с общим недоразвитием речи / Дефектология, 2004, №5, с. 34-41.
13. Ушакова Т. Н., Принципы развития ранней детской речи / Дефектология, 2004, №5.
14. Филичева Т. Б., Чиркина Г. В., Устранение ОНР у детей до школьного возраста, М. 2008, с. 224.

## **Развитие словаря ребенка с точки зрения онтогенеза и дизонтогенеза**

В статье описывается развитие словаря детей в онтогенезе и рассматривается проблема развития словаря с точки зрения ее нарушений. Раскрываются основные закономерности становления словаря в норме, а также особенности развития словаря у детей с общим недоразвитием речи.

## **Development of child's vocabulary from the perspectives of ontogenesis and disontogenesis**

In the article the development of child's vocabulary in ontogenesis is described, the issue of vocabulary development is presented from the perspectives of its disorders. The main regularities of its normal development and the peculiarities of development of vocabulary of children with total speech maldevelopment are disclosed.